

Ս. Ս. Նազարյան

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան Նազարյանը ծնվել է 1858 թ. սեպտեմբերի 29-ին, Ղարաբաղի Շուշի քաղաքում: Հայրը՝ Հակոբջանը խելացի և կարգացած մարդ էր, զբաղվում էր առևտրով, իսկ մայրը՝ տիկին Զարուհին, Հախումյան հայտնի գերդաստանի ղուստրն էր: Նա ծնողների միակ դստան էր: Զորս տարեկան հասակում Հախումյան Տեր-Կալապետի մոտ պրաճանաչություն սովորելուց հետո, նրան տեղափոխում են լեզվագետ Գալուստ Փալադյանի դպրոցը, ուր դասավանդվում էր հայերեն (գրաբար), ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն: Ընդունակ պատանին կարճ ժամանակամիջոցում յուրացնում է այդ լեզուները, մանավանդ ֆրանսերենը ու կատարում թարգմանություններ: Դպրոցն ավարտելուց հետո նա զբաղվում է ինքնազարգացմամբ, կարդում կլասիկ տնտեսագետների երկերը:

Տիգրանը մանկության և պատանեկության տարիներին սիրել է թատերական գործը: Գրել է պիեսներ¹, որոնք ներկայացվել են Շուշիում:

Պատանի հասակում նա Շուշիում կատարել է կազմակերպչական շնորհակալ աշխատանք: Նրա օգնությամբ կարգի է բերվել 60-ական թվականներից մոռացության մատնված քաղաքային գրադարանը, իսկ 1879 թ. երիտասարդ Տիգրանը Շուշիում հիմնել է հրատարակչական գրասենյակ, որի առաջին հրատարակությունն էր Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» ժողովածուն՝ հեղինակի ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններով: Ինքը՝ Նազարյանը ռուսերենից թարգմանել ու հրատարակել է լեհ գրող Հենրիխ Սենկևիչի «Պոդանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, Ալֆոնս Դոդեի «Երկու մանրավերջ» (բնագրից) և այլն: Այս գործերի ընտրությունն ու թարգմանությունն ինքնին վկայում են նրա գեղագիտական ճաշակի, գրական նախասիրությունների մասին:

Իր լրագրային առաջին թղթակցությունները նա տպագրել է «Մշակում» և «Լրագրական իմ թոթովանքը», — գրում է նա, — ես «Մշակի» մեջ եմ սկսել»:

Հասարակական մեծ դեր և նշանակություն տալով հրապարակախոսություն, Տիգրան Նազարյանը նպատակադրվում է աշխատել ժուռնալիստիկայի ուսույարնելու: 1881 թ., հրատարակչական աշխատանքում փորձված, ազգային առաջադիմության ոգով տոգորված, Նազարյանը գալիս է Թիֆլիս, հայ հասարակական մտքի զարգացման և մտավոր բախումների կենտրոնատեղին: Այդ մի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովուրդը նշանակալից էտապ էր ապրում: Առաջավոր գեմոկրատ մտավորականների շուրջը համախմբվում էին հայ ժողովրդի լայնագույն շարքերը: Ժողովրդի կրթության, լուսավորության,

¹ Նրա «Օրադրդ քույր ետրի» և «Ղալի աղաթներան» պիեսները հրատարակվել են 1887 թ.: Տիգրան Նազարյանը գրել է նաև հինգ գործողությունից բաղկացած «Արդա» պիեսը, որը «Ռանձին գրքով տպագրվել է 1913 թ., Թիֆլիսում:

² «Տարազ», 1912, № 5, էջ 108:

հասարակական-քաղաքական կյանքի բարեկաման հարցերը լայնորեն քննարկվում էին ժամանակի առաջավոր պահանջների տեսանկյունից: Ընդլայնվում էր ժողովրդական դպրոցների ցանցը, հրատարակվում էին գեղարվեստական, ինչպես և գիտական հանրամատչելի գրքեր:

Տիգրան Նազարյանը ժողովրդի բարոյակրթության, առաջադիմության և կուսավորության գործին ծառայելը նախընտրում է սկսել մատաղ սերնդի դաստիարակությունից: Թիֆլիսում նա մոտ կապեր է հաստատում Միքայելյան արհեստագիտական ուսումնարանի ուսուցիչ Գաբրիել Միրզոյանի, նրա կնոջ՝ հայ մանկական թարգմանչական գրականության վետերան Նատալիա Տեր-Մարկոսյանի՝ ու նրանց շուրջը համախմբված առաջադեմ երիտասարդության հետ, որոնք նպատակադրվել էին ստեղծել մանկական գրականություն, ինչպես և մանկական պարբերական մամուլ: Ուստի, Տիգրան Նազարյանը հանձին այդ խմբի գտնում է իր ակտիվ գործակցին: Նա Գաբրիել Միրզոյանի հետ միասին և նրա ակտիվ համագործակցությամբ ձեռնամուխ է լինում «Աղբյուր» մանկա-պատանեկան ամսագրի հրատարակմանը, որի անդրանիկ համարը լույս տեսավ 1883 թ. հունվարին: Նա իր պարբերականի գլխավոր նպատակն է համարում «առաջնորդել մատաղ հասարակությունները, ցանկ նրանց մեջ ազնիվ մարդ լինելու սերմեր, զարթեցնել և զարգացնել նրանց մեջ ազնիվ, բարի ձգտումներ և արմատախիլ անել շար ու վնասակար որոմն...»⁴:

1890 թ. սկսած «Աղբյուր» ամսագրին զուգընթաց Նազարյանը հրատարակում է նաև «Տարազ» շաբաթաթերթը: Այստեղ են տպագրվում խմբագրի հասարակական-քաղաքական հայացքները բացահայտող նրա առավել արժեքավոր հոդվածները⁵:

90-ական թվականներին, երբ առաջադրվում է ժողովրդական լայն մասունների իսկական շահերը պաշտպանող նոր կուսակցության, նոր մամուլի անհրաժեշտության պահանջը, առաջավոր գեմոկրատ մտածողների հետ միասին Տիգրան Նազարյանի խմբագրած պարբերականները նույնպես արձագանքում են այդ նոր ու կարևոր խնդրին. «Հինը նեխվում է, փթում, ոչնչանում է և նրա բեկորների վրա կառուցվում է նորը, — ազդարարում է «Տարազը»: — Այդ նորի գրողակի վրա գրված չէ ոչ մի լրագիր անուն, նա ինքնուրույնության հղացել է, զարգանում է և օր-օրի վրա զորեղանում իր սեփական անունով: Նա կարող է դաշն կապել միայն այն օրգանի հետ, որ դավանում է նույն սկզբունքները: Իբրև նոր և թարմ ուղղություն, նա միայն նորի և թարմի հետ կարող է գործ ունենալ: Ամեն մի նեխած մարմին նրա համար համահավասար գարշելի է: Գալով մեզ ուրախությամբ ենք միանում այս նոր կուսակցությանը»⁶: «Սուրհանդակ» ոտոբագրությամբ տպագրված այս հոդվածում «նոր կուսակցություն» արտահայտությունը անկասկած վերաբերում է սոցիալ-դեմո-

3 Նատալիա Տեր-Մարկոսյանը համարվում է «Հայերեն գրքերի հրատարակության ընկերության» առաջին թարգմանչուհին և այդ «ընկերության» հիմնադիրներից մեկը: Այդ մասին տե՛ս. «Աղբյուր», 1884, № 8—9, 2-րդ բաժին, էջ 31: Նա 1879—1880 թվականների ընթացքում թարգմանել է Ավենարիուսի «Թավամազ մեղու», Վուլտիչի «Կարմիր լապտեր», Բիլեր-Ստուրի «Թուվմաս եղբոր տնակը» և այլ մանկական գործեր:

4 «Աղբյուր», 1883, № 1, 2-րդ բաժին, էջ 1:

5 Տե՛ս «Տարազ», 1890, № 3, էջ 42—43, № 7, էջ 102—103, № 8, էջ 119—120, 1891, № 22, էջ 493, 1894, № 6, էջ 85, № 7, էջ 102, № 9, էջ 133—134, 1895, № 16, էջ 246—247, № 17, էջ 263—264 և այլն:

6 «Տարազ», 1897, № 13, էջ 224:

կրատական կուսակցությանը, որի գործունեության նկատմամբ «Տարազը» իր համակրանքն է ցուցաբերել, և արտացոլել է լեզալ մարքսիստական հայացքները: «Տարազը» ժամանակին օգտակար դեր է կատարել Անդրկովկասում հայ սոցիալ-դեմոկրատական ուժերը համախմբելու գործում: Այդ մասին է պատմում «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հիմնադիրներից Արշակ Զուրաբյանի «Տարագում» տպագրված «Քաղցր հիշողություններ» հոդվածը⁷: Նազարյանը այն միակ խմբագիրն էր, որ համաձայնվել է գրաքննության հետապնդումների դժվարին պայմաններում իր թերթում տպագրել պետական սոցիալիզմի մասին Գ. Հաուպտմանի «Խորասույզ զանգի» դրամայի առթիվ գրված Ա. Զուրաբյանի հոդվածը: Այնուհետև Զուրաբյանը դարձել է «Տարապի» մշտական աշխատակիցը: «Ես, իհարկե, — դրում է Զուրաբյանը, — չգիտեմ, թե ինչ օգուտ եմ բերել իմ հոդվածներով «Տարագին» ու նրա ընթերցողներին, բայց քաջ գիտեմ, որ ես իմ նպատակին հասա, հատ ու կենտ ինտելիգենտներ, լավ ինտելիգենտներ, հեղափոխական երիտասարդներ, որոնք մինչև օրս աշխատում են մեր կամ բոլշևիկների շարքերում, արձագանք տվին և մենք սկսեցինք հող պատրաստել հայ բանվորական իրականության մեջ...: «Տարազը», — շարունակում է նա, — մեծ ծառայություն մատուցեց մեզ՝ հայ սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտներին...: Ես ետ եմ նայում ու տեսնում նորից այդ լուսավոր բծերը մեր անցյալում և ասում. թող շմոռանա հայ մարքսիստական ինտելիգենցիան, թող գիտենա հայ բանվորությունը, որ նրա պայքարում ու ստեղծագործ աշխատանքի մեջ «Տարազը» կատարել է թող փոքրիկ, շատ փոքրիկ, փույթ չէ, գործ, և մեր շարժման մեջ կան նաև «Տարագի» արյան և քրտինքի կաթիլները...»⁸:

Տիգրան Նազարյանը գիտակցում էր, որ նոր գաղափարախոսության հաղթանակի համար անհրաժեշտ էր կովի ելնել ավատական-կալվածատիրական կարգերի օրոք ստեղծված հետադեմ գաղափարախոսության ու պատգամների դեմ:

Ժամանակի պայմաններում նման առաջավոր դեմոկրատական հայացքների տեր խմբագրի համար հեշտ չէր հրապարակախոսական գործունեություն ծավալելը, հատկապես մանկական պարբերական հրատարակելը: Զկար համապատասխան մանկական գրականություն, գրաքննական կոմիտեն վերահսկում էր, հետագեմ հայացքների տեր մտավորականությունն ու կղերա-պահպանողական մամուլը, հարմար առիթներում վտանգում էին ամսագրի գոյությունը: Ոստիկանական գործակալների միջոցով շատ անգամ բռնագրավվում էին ամսագրի համարները, նույնիսկ խմբագրության գույքը: Այդ մասին են վկայում ինչպես Թիֆլիսի պետական պատմական արխիվում պահպանվող Կովկասյան գրաքննական կոմիտեի կողմից «Աղբյուրի» և «Տարագի» արգելված նյութերը, այնպես էլ Տիգրան Նազարյանի հետևյալ խոսքերը. «Հիշե՛լ արդյոք, թե ինչպես մեր խմբագրական սեղանի վրա սուղերնի պրիստավը իր արձանագրություններն էր կազմում, կատարման թղթերը (испол. листы) ձևաքին խմբագրությանս գույքը վերգրում, այն սեղանի վրա, որի տակ շատ հազար անքուն գիշերներ ենք լուսացրել, քաղցր հույսերով բարվոյ, գեղեցիկի գաղափար ցանկելով...»⁹:

⁷ Տե՛ս «Տարազ», 1919, № 6, էջ 42:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, 1899, № 50, էջ 1151:

Գրաքննական կոմիտեի վերահսկողության նկատմամբ խմբագիրը ստիպված էր հարմարվողական դիրք գրավել, բայց հետադեմ մամուլին պատասխանում էր համարձակ, ճակատ առ ճակատ: Երբ «Մեղու Հայաստանի» թերթի աշխատակից Գեղամյանը (Հայկունի) փորձում է ստվեր գցել «Աղբյուր» ամսագրի լուսավոր նպատակների վրա, վնասակար համարելով գրական-գեղարվեստական գործերի ռեալիստական ուղղությունը (օրինակներ բերելով Ռաֆֆու «Ջրաբերդը»¹⁰ և Սողոմոն-Նեսմելովի «Ուրախություն և վիշտ»¹¹ պատկերները), Տիգրան Նազարյանը «Աղբյուրում» տպագրում է պատասխան հոդվածներ և հակառակորդին միանգամայն իրավացիորեն մեղադրում խավարասիրության մեջ, ամսագրի լուսավոր ու պայծառ գաղափարները չհասկանալու և չըմբռնելու մեջ: «Շարունակեցեք, — գրում է նա, — մենք մեր գործը ճանաչում ենք մեր հասկացածի չափով և ձեր վարմունքը «Աղբյուրի» վերաբերմամբ մեզ համար շատ հեշտ բացատրելի է...»¹²:

Տիգրան Նազարյանի նկատմամբ թշնամաբար էին տրամադրված հոգևոր դասի ներկայացուցիչները: Երբ «Աղբյուրում» լույս տեսած իր մի հոդվածում Ղազարոս Աղայանը օգտագործել էր հետևյալ արտահայտությունը «Մեր եկեղեցում թույլ է տրվում քմահաճոյ բղավոց ու զոռոց, բայց թույլ չի տրվում էրկնային ներդաշնակություն ունեցող երգեհոնի նվագելը»¹³, հոգևորականներից մի քանիսր բողոք են ներկայացնում էջմիածին, Մակար կաթողիկոսին: Վերջինս մի կիսապաշտոնական շրջաբերականով արգելում է ամսագրի տարածումը հայկական դպրոցներում: «Սակայն, — գրում է այդ առթիվ Նար-Դոսր, — Տ. Նազարյանը ոչ միայն չընկճվեց այդ հալածանքներից, այլև ինքը մղվեց նրանց դեմ»¹⁴: Իր մասին Նազարյանը գրել է. «Խոչընդոտները և անհաջողությունները երբեք մեզ չեն կարող վհատեցնել: Որքան մենք այսօր շղթաված լինենք ծանր, նույնիսկ դաժան հանգամանքներով, այնուամենայնիվ աներկբա հավատում ենք, որ մեր գործը բարի ապագա ունի, որ նա օգտակար է հայությանը»¹⁵:

Նազարյանն իր պարբերականների շուրջն էր համախմբել հայ առաջավոր գեմոկրատ գրողների, ականավոր մանկավարժների, գիտնականների, կուլտուրայի և արվեստի գործիչների: Նա գիտեր խրախուսել ու ոգևորել սկսնակ բանաստեղծներին՝ տպագրելով նրանց գրական առաջին փորձերը: Նրա նպատակն էր՝ «Աղբյուրի» միջոցով ստեղծել ռեալիստական ուղղություն ունեցող, զաղափարապես հագնցված մանկական գրականություն: Իր ձեռնարկած գործի հաջող ընթացքի համար նա սահմանում է լավագույն մանկական պատմրվածքի և բանաստեղծության մրցանակաբաշխություն, որի մասին մանրամասն տեղեկություններ է տպագրում ամսագրում: Կարճ ժամանակում ամսագիրը դառնում է հայ գրականության օրրանը. սկսնակներից մինչև գրական լայն ճանաչում գտած հեղինակները աշխատակցում են «Աղբյուրին»:

Նազարյանն ակտիվորեն խմբագրական աշխատանք էր կատարում, ընտրում նյութերը, ամսագրի ուղղությունը շահապատասխանող և դաստիարակու-

¹⁰ «Աղբյուր», 1883, № 2, էջ 68—79:

¹¹ Նույն տեղում, 1884, № 1, էջ 21—34:

¹² Նույն տեղում, № 3, էջ 22:

¹³ «Աղբյուր», 1889, № 2, ր. բաժին, էջ 42:

¹⁴ Նար-Դոսր, Քսան և Հինգ ամյակ «Աղբյուրի», 1908, էջ 54:

¹⁵ «Տարազ», 1898, № 40, էջ 889:

թյան տեսակետից ոչ օգտակար գործերը մերժում, հարկավոր պատասխաններ հղում հեղինակներին: Թղթակիցներից մեկին ուղղված նամակում ասվում է. «Ստացել ենք, բայց մեր ընթերցողներին հարմար չէ»¹⁶: Շատ անգամ էլ ոգեփորիչ խոսքեր են գրվել այդ պատասխան-նամակներում: Վ. Աղուլիս ուղարկված մի նամակում խմբագրությունը հեղինակին խրախուսում է. «Ձեր ոճը շատ գեղեցիկ է և պարզ, հույս ունենք կշարունակեք»¹⁷:

Սեփական արժանապատվությունը ճանաչելու, մարդկային իրավունքները պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու ոգով էին մանկանք դաստիարակում հասարակական ու քաղաքական նշանավոր գործիչների, գրողների, գիտնականների, ինչպես օրինակ Վիկտոր Հյուգոյի¹⁸, Չարլզ Դիկկենսի¹⁹, Միքել Ֆարադեի²⁰ և ուրիշների կյանքը պատկերող հոդվածները, որոնք տպագրվում էին «Աղբյուրում» «Կամքի ուժը» և «Երևելի մարդիկ» խորագրերի տակ:

«Աղբյուրը» իր հետաքրքրական նյութերով գրավում էր թե՛ մանուկ, թե՛ մեծահասակ ընթերցողների ուշադրությունը: Բայց չարակամ հայ խմբագիրներից ոմանք այս գրական երևույթը սխալ էին հասկանում և ամսագիրը համարում էին վնասակար ուղղություն ունեցող պարբերական: Տիգրան Նազարյանը այդպիսիներին, հատկապես «Նոր-Դարի» խմբագրին պատասխանում է. «Նոր-Դարը» չենք իմանում ինչու, զարմանում է այդ բանի վրա, նա մեզ հարց է առաջարկում, թե ի՞նչ տեսակ նյութ է մատակարարում «Աղբյուրը», որ մեծն ու փոքրը միևնույն հետաքրքրությունով կարող են կարդալ... Եթե «Նոր-Դարի» պ. խմբագիրը ոչնչով չզանազանվեր իրան շրջապատողներից, մենք, իհարկե, մեր կողմից չէինք զարմանալ նրա հարցի վրա, բայց քանի որ նա համարվում է փոքրիշատե զարգացած մարդ, նա պետք է իմանա, որ կա մանկական գրականության մեջ մի ուղղություն (ձևի կողմից), այդ ուղղության ներկայացուցիչներն են Կոտ-Մուրլիկա, Անդերսեն և այլք, որոնց գրվածքների ամենազիսավոր արժանավորությունը հենց նրանումն է, որ այդ տեսակ գրվածքները ամեն հասակի մատչելի են և հետաքրքիր»²¹:

Տիգրան Նազարյանը առաջավոր դիրքերից ըմբռնելով մանկական գրականության հարցերը, ամսագրի միջոցով տարածում էր անցյալի և ներկայի դեմոկրատ գրողների լավագույն մանկական ստեղծագործությունները: Ամսագրի նյութերը պատմում էին մանկանք ամեն ինչի մասին, մատուցման ձևի մեջ պահպանելով պարզ ու հստակ ոճ, դյուրամբռնելի լեզու: Կյանքի նկատմամբ լավատես, անվեհեր հոգու տեր խմբագիրը ձգտում էր մատուցել այնպիսի նյութ, որը ամեն դեպքում հուսադրեր մանկանք ու կենսախիղ պահեր նրա հոգին, նրա մեջ առաջացներ ասպազան պայծառ տեսնելու տրամադրություններ, թեկուզ ներկան տխուր էր ու դժան: Դրանում էին կայանում «Աղբյուրի» նյութերի ուժն ու կենսունակությունը, այդ էր այն առաջավորն ու նորը, որ մուտք էր գործում ժամանակի մանկական գրականության մեջ:

1909 թ. սկսած ամսագրի յուրաքանչյուր համալիրին կից լույս է ընծայվում «Մանկական աշխարհ» պատկերազարդ ամսաթերթը, որը հրատարակ-

16 «Աղբյուր», 1889, № 4, էջ 72:

17 Նույն տեղում, 1883, № 12, ր. բաժին, էջ 48:

18 Նույն տեղում, 1892, № 1, էջ 25—37:

19 Նույն տեղում, 1889, № 1, էջ 25—37:

20 Նույն տեղում, 1912, № 2, էջ 61:

21 Նույն տեղում, 1884, № 12, ր. բաժին, էջ 41:

վում էր մանուկների կողմից, նրանց նախաձեռնությամբ: «Մանկական աշխարհում» իր ոգևորիչ խոսքերով հաճախ հանդես էր գալիս Տիգրան Նազարյանը: Նրա նպատակն էր՝ խրախուսել ստեղծագործական շնորհք ունեցող աշակերտներին, ընթացք տալ նրանց գործերին ու գրական ասպարեզ հանել նրանց: Ամսաթերթին թղթակցող աշակերտները գրում էին դպրոցական կյանքից փոքրիկ հոգիածներ, պիեսներ, հանելուկներ, առակներ և այլն:

Տիգրան Նազարյանը «Աղբյուր» ամսագրին և «Տարազ» շաբաթաթերթին դուրսնալու հրատարակել է «АНОНСЫ» օրաթերթը ուսերեն լեզվով (Թիֆլիս, 1892), «Կովկասի առավոտ» օրաթերթը (Թիֆլիս, 1907—1908), «Տարազի» հավելվածները «Գեղափնջիկը» (Թիֆլիս, 1907—1912), «Առողջապահիկը» (Թիֆլիս, 1911—1912), «Փարիզի մոդաները» (Թիֆլիս, 1910—1918), «Իլյուստրացիոնը», «Դաստիարակը» (տարբեր տարեթվերի), «Լրաբեր» շաբաթաթերթը (Թիֆլիս, 1918) և այլն: Իսկ «Աղբյուր — Տարազի» խմբագրության կողմից լույս ընծայած գրքերի, օրացույցների, ամսանախների, ժողովածուների և այլնի թիվը այնքան մեծ է եղել, որ մեկ առ մեկ թվարկելը անհնարին է: Տիգրան Նազարյանը իր ժրջան և գործունյա բնավորությամբ շարժել է ժամանակի գրական ու հասարակական գործիչների հետաքրքրությունը: «Մաղբոս»²² ստորագրությամբ Շիրվանզադեն «Տարազում» գրել է. «Ես զարմանում եմ Տիգրան Նազարյանի տոկունության և եռանդի վրա: Կարծեմ ինձ հետ զարմանում են և շատ-շատերը: Տարիների ընթացքում աշխատել, վազվզել դես ու դեն, խմբագրել, տպագրել, գրաշարների հետ կովել, ամեն օր տպարանում և փոստատանը արյուն պղտորել, ծախսել անվերջ, ենթարկվել փոքրոգի մարդկանց ծաղրին ու կատակին, քայքայել այն հարստությունը, որն ամենից թանկն է և դարձյալ շարունակել գործել — այս իրավ որ ապշեցուցիչ է»²³:

1908 թ. Թիֆլիսում առաջավոր դեմոկրատ գրողների ու ընթերցող հասարակայնության նախաձեռնությամբ կազմակերպվում է ամսագրի 25-ամյա հոբելյանը: «Աղբյուրի» սաները, բազմավաստակ գրողները իրենց շնորհավորանքներն են հղում հարազատ ամսագրին ու սիրելի խմբագրին: Ամսագրի ու նրա խմբագրի սրտակից բարեկամ Ալ. Մատուրյանը հնարավորություն չունենալով հոբելյարին անձամբ շնորհավորելու, Նար-Դոսին ուղղած նամակում գրում է. «Ենդրում եմ Միքայել, իմ կողմից անկեղծ ու հազար-հազար շնորհավորանքներով պինդ սեղմիր Տիգրան Նազարյանի ձեռքը և ասա, որ նրա 25-ամյա շարքալ գործն ու աշխատանքը, հիրավի, մի մարտիրոսություն է, բայց նվիրական մարտիրոսություն, թող չվհատվի, չկորցնի իր թափն ու եռանդը, որովհետև մարտիրոսների ամենամեծ վարձն ու բարոյական խորին մխիթարանքը մեզ պես լուսագուրկ ազգի մեջ՝ հենց ինքը մարտիրոսություն է...: Ասա, որ ես միշտ երախտագիտությամբ եմ հիշում նրա անցյալ խնամալից վերաբերմունքը դեպի իմ ծանր վիճակը պատանեկության տարիներին: Երախտապարտ եմ և հոբելյար «Աղբյուրին», որն համարյա առաջինը խրախուսեց իմ գրական անդրանիկ քայլերը...»²⁴:

²² Շիրվանզադեն «Մաղբոս» ստորագրությամբ գրական-քննադատական, հրապարակախոսական հոդվածներ և նամակներ է տպագրել «Տարազում»: Այդ մասին տե՛ս, Ալ. Շիրվանզադե (1858—1958), Երվրդգրաֆիա, Երևան, 1959, էջ 73:

²³ «Տարազ», 1903, № 32, էջ 286:

²⁴ «Դրական ժառանգություն», գիրք 1, 1961, էջ 71:

* * *

Տիգրան Նազարյանը խմբագրական-հրատարակչական աշխատանքի հետ միասին ծավալում էր նաև հասարակական-կազմակերպչական ակտիվ գործունեություն: Հրատարակչական և տպագրական գործը բազմակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով, 1887 թ. նա մեկնում է Պետերբուրգ, որտեղ և չփվում է արվեստի ու կուլտուրայի գործիչներին, կապ հաստատում առաջավոր ինտելիգենցիայի հետ: Այնուհետև, տարբեր առիթներով, նա հաճախակի լինում է եվրոպական տարրեր երկրներում, ծանոթանում նրանց գրական ու կուլտուրական կյանքին:

Այդ ճանապարհորդությունները, որ նա կատարում էր գրեթե ամեն տարի, կարևոր դեր էին խաղում նրա հասարակական-քաղաքական հայացքների կազմավորման գործում, կնիք դնում նրա հետագա գործունեության վրա: Իտալիա կատարած ճանապարհորդության ժամանակ, Նազարյանը Կապրի կղզում հանդիպում է Մ. Գորկուն և մտքեր փոխանակում նրա հետ: Նա «Տարազում» լայն տեղ է հատկացնում Գորկու ստեղծագործություններին, իսկ «Աղբյուրում» տպագրում է կյանքի վերաբերյալ նրա իմաստուն խոսքերը:

Ճանապարհորդությունների ընթացքում տեսնելով ժողովուրդների հնազարդան հուշարձանները, աշխարհահռչակ ճարտարապետական կոթողները, ծանոթանալով անտիկ կուլտուրային, նա համակվում է այն զգացումով, որ «աշխարհում ոչինչ անկարելի չկա»: Կյանքի նկատմամբ լավատեսորեն տրամադրված Տիգրան Նազարյանը իր ժողովրդի գալիք պայծառ օրը տեսնելու համոզումներով լի, ավելի ու ավելի հաստատուն քայլերով է առաջ տանում իր գործունեությունը, ինչպես պրականության ու հրապարակախոսության ասպարեզներում, այնպես էլ հասարակական ոլորտներում: Երբ 1895 թ. սուլթանական կառավարության կողմից Սասունում կազմակերպված հայ ժողովրդի կոտորածների բոթը հասնում է Կովկաս, Նազարյանը շտապում է Եվրոպա՝ պաշտոնյա հայ անձանց, ինչպես և օտարերկրյա պետությունների միջամտությունը հայցելու: Նմանօրինակ փորձերի ընթացքում Նազարյանը համոզվում է, որ իմպերիալիստական երկրները, զավթողական պատերազմներ բորբոքելուց բացի, ոչինչ չէին կարող տալ ալգային փոքրամասնություն կազմող ժողովուրդներին: «Սակայն հանուն քաղաքակրթության, — գրում էր նա, — Ֆրանսիան չքաշվեց մադագասկարցիներին ճանձի նման կոտորելուց, Անգլիան՝ կոտորեց բուրերին, Գերմանիան տիրեց Դամասկոսին, Եփրատի հովիտներից մինչև Պաղեստին, (սակայն առանց մի կաթիլ արյուն թափելու): Եվրոպան այսքանով չբավականանալով, ոտքը դրեց մինչև շինական պարիսպները»²⁵:

Նազարյանը հայ ժողովրդի ազատագրության հույսը կապում էր Ռուսաստանի հետ, իհարկե, ոչ ցարական, այլ ազատագրված Ռուսաստանի: Նա հանդես էր գալիս ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատությամբ: 1905 թ., երբ ցարիզմը հայ, թուրք, վրացի և այլ ժողովուրդների միջև ազգամիջյան կռիվներ էր հրահրում, Նազարյանը կազմակերպում էր երեկոներ՝ նվիրված եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Այդ երեկոների ընթացքում նշվում էին վրաց և եղբայրական մյուս ժողովուրդների գրողների, կուլտուրայի և արվեստի գործիչների հոբելյանները, մեծարվում էին ժողովուրդների միջև եղբայրության,

²⁵ «Տարազ», 1905, № 18, էջ 210.

խաղաղասիրության գաղափարները սերմանող նշանավոր գործիչները: Կուլտուրայի և արվեստի բնագավառներում ժողովուրդների միջև համագործակցություն հաստատելու նպատակով, նա հրատարակում է «Թատրոն և երաժշտություն» թերթը, ուր հոգվածների մեծ մասը գրում էր ինքը՝ «Տիգր» ստորագրությամբ:

1908 թ. Տիգրան Նազարյանը իրավունք է ստանում մասնակցելու Լիսաբոնում (Պորտուգալիա) բացված Գրականագետների, արվեստագետների և խաղաղության միջազգային ընկերության կազմակերպած ցուցահանդեսին: Նա ներկայացնում է հայ մատենագիրների լուսանկարները և նրանց կրկերից մեկական հատորներ: Ցուցահանդեսը փակվելուց հետո, հայկական բաժնի նյութերը դառնում են Պորտուգալիայի ազգային մատենադարանի սեփականությունը: Մատենադարանը նոր բաժնով հարստացնելու համար Նազարյանը ընտրվում է Գրականագետների, արվեստագետների և խաղաղության միջազգային ընկերության պատվավոր անդամ, որպիսի պատվի արժանացել էին Եվրոպայից՝ Զուդերմանը, Կարմեն Սիլվան, Հաուպտմանը, Ֆլամարիոն, Ռուսաստանից՝ Լև Տոլստոյը և Մաքսիմ Գորկին: 1908 թ. նույն ընկերությունը տոնում է Լև Տոլստոյի հոբելյանը: Տիգրան Նազարյանին որպես պատգամավոր և լիազոր ներկայացուցչի հանձնարարվում է անձամբ ներկայանալ Տոլստոյին և նրան մատուցել ընկերության շնորհավորանքի ուղերձը: Տոլստոյի ծննդավայր՝ Յասնայա Պոլյանա կատարած ուղևորությունը Նազարյանը մանրամասն նկարագրում է իր «Ուխտագնացություն Լև Տոլստոյին» հոդվածում²⁶, Հանդիպումը հանճարեղ գրողի հետ անշափ ջերմ էր, զրույցը սրտաբուխ: Մեծ հուժանիստը հետաքրքրությամբ է լսում կովկասցի խմբագրին: Տիգրան Նազարյանը Տոլստոյին է հանձնում «Աղբյուրի» և «Տարազի» այն համարները, որոնք նվիրված էին գրողի հոբելյանին: Այդ հանդիպման ժամանակ Տոլստոյը Տիգրան Նազարյանին նվիրում է իր լուսանկարը՝ մակագրությամբ²⁷:

Հասարակական-կազմակերպչական աշխատանքների ավելի եռանդուն շրջան է սկսվում Նազարյանի համար 10-ական թվականներին, երբ գործում էր նրա գրական սալոնը, որին կից 1915 թ. Թիֆլիսում ապաստան գտած տաճկահայ սարագիյների համար բացվում է արհեստագիտական դպրոց: Նույն թվականին նրա կողմից հիմնվում է «Հրատապ սփռփանք մայր հայաստանցիներին» ապաստարանը, ուր կազմակերպվում է որբ մանուկների սննդի ու դաստիարակության գործը: Սալոնում են հիմնադրվում Թիֆլիսի բժիշկների, կրթիչների, լուսանկարիչների ընկերությունները և այլն:

Ժամանակի մամուլը բարձր է գնահատել նրա կատարած աշխատանքները: Հայկական «Մշակ», «Մուրճ», ռուսական «РОДНИК», վրացական «თეატრი და ცხოვრება» («Թատրոն և կյանք») և այլ պարբերականներում կան դրական բազմաթիվ արձագանքներ: Շիրվանզադեն, Նար-Ղոսը, Մուրացանը, Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Մատուրյանը և շատ ուրիշներ իրենց հիշողություններում արժեքավորելով Նազարյանի աշխատանքը, այն գնահատել են որպես լուսաշող մի փարոս, ուղեցույց աստղ՝ ժամանակի խավար իրակայությունում: Ուշագրավ է նաև վրացական «თეატრი და ცხოვრება» («Թատրոն և կյանք») ամսագրի գնահատականը Տիգրան Նազարյանի գործունեության

²⁶ «Տարազ», 1910, № 11, էջ 105—109:

²⁷ Նույն տեղում, էջ 108—109:

մասին: Հողվածի հեղինակ Իոսևփ Արիմաթիելին մեկ առ մեկ թվարկելով նրա կատարած խմբադրական ու հրատարակչական, ինչպես նաև հասարակական-կազմակերպչական աշխատանքները, լրիվ ժողովում է Տիգրան Նազարյանի մեծ դերը, որպես հայ և վրաց ժողովուրդների միջև համերաշխության, եղբայրության, խաղաղասիրության դադափարները տարածողի: «Նրա բարձր արժեքը կայանում է նրանում, — գրում է նա, — որ չի առաջնորդվում նեղ, շովինիստական հայացքներով: Նրա նպատակը շատ մեծ է, թո՛ղ ապրի նրա նպատակը և գործունեությունը մեր ժամանակի խավար կյանքում»²⁸:

1918 թ. դադարում է լույս տեսնելուց «Աղբյուրը», իսկ մեկ տարի հետո՝ «Տարագր»։ Նազարյանը «Աղբյուր-Տարագր» ամբողջ տրիսիվը գրադարանի հետ միասին հանձնելով Հայաստանի իշխանությանը, մեկնում է արտասահման: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա հայրենիք է վերադառնում՝ սոցիալիստական ազատ իրականությունում գործելու բուռն ցանկությամբ:

Արտասահմանում եղած տարիները (1919—1925) Նազարյանի համար ապարդյուն չեն անցնում: Փարիզում հայերեն լեզվով լույս տեսնող «Ապագա» և այլ պարբերականներում հողվածներ է տպագրում Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքում ձեռք բերված նվաճումների մասին: Նա գրում է իր «Ինքնակենսագրությունը», «Իմ էպոխը», հրատարակում «Թիքա» վերնագրով մանկական գործերի ժողովածուն և այլն: Վերջապես 1925 թ. Նազարյանը վերադառնում է հայրենիք: Իր ուրախությունը արտահայտելով հայ ժողովրդին՝ ռուս, վրացի, ադրբեջանցի ու այլ ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված խաղաղ շինարարության մեջ տեսնելու կապակցությամբ, նա դեռ արտասահմանում եղած ժամանակ գրել է. «Խորապես համոզված, որ Կովկասի բարձր կախված է լայնատարած Ռուսիայի բարգավաճումից, տարիների ընթացքում մի կողմից կշտամբել եմ խարդախ, արյունարբու, վաշխառու նվրդային, իսկ մյուս կողմից էլ ցարիզմի հետ բռնակալական սկզբունքներով կառավարության: Սակայն, աներկբա եմ եղել, որ կգտ հեղափոխությունը, հիմնովին կհեղաշրջե Ռուսիան և բազմալեզու, բազմացեղ ժողովուրդները կստանան ներքին անկախ, անկաշկանդ ազատություն, միմյանց հետ շաղկապված մի խոշոր ամբողջություն»²⁹:

Նազարյանը, հայրենիքում գործելու բուռն ցանկությամբ, ստանձնում է Ղարաբաղի օգնության կոմիտեի փոխնախագահի պաշտոնը, ծրագրում է հրատարակել «Կարմիր աղբյուր» վերնագրով պարբերականը: Սակայն մահը անկատար է թողնում նրա գեղեցիկ նպատակները:

1926 թ. սեպտեմբերի 14-ին, Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցում մահանում է վաստակավոր գործիչը, խմբագիրն ու հրատարակիչը: Նրա դին ամփոփվում է Թիֆլիսի Վերայի գերեզմանատանը:

28 ԾԵՃԵՐԸ ԸՆԴ ԵՐԵՎԱՆԻ («Թատրոն և կյանք»), 1918, № 7, էջ 5:

29 ՀՍՍՐ-ի գրականության թանգարան, Տ. Նազարյանի ֆոնդ, թղթապանակ № 4, վավերագիր 201—2233, հուլիսի 25, էջ 33:

С. С. Назарян

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ТИГРАНА НАЗАРЯНА

Р е з ю м е

В конце 19-го начале 20-го вв. в истории армянской периодики значительную роль сыграл Тигран Назарян. Общественно-литературная деятельность писателя-публициста начинается в его родном городе Шуши, которая продолжается и расширяется в г. Тифлисе.

С 1883 года он издает детский журнал «Ахбюр» (Родник), который имеет целью создание идейно насыщенной и богатой содержанием литературы для детей, а с 1890 года еженедельник «Тараз», работает над созданием календарей, книг и т. д.

Тигран Назарян в своих периодических изданиях разрабатывает новые принципы и методы редакционно-издательской работы. Он сплочает вокруг своего журнала передовых демократических писателей, педагогов, деятелей искусства и науки.

Тигран Назарян совмещал одновременно редакционно-издательскую работу с общественной деятельностью. В Тифлисе он основывает литературно-эстетический салон, где организовываются вечера, посвященные дружбе и братству народов.

Активная творческая и общественная деятельность Т. Назаряна получает достойную оценку со стороны его современников, в том числе писателей Ширванзаде, Ов. Туманяна, Нар-Доса, Мурацана, русского детского журнала «Родник», грузинского журнала «Театри да цховреба» и т. д.

Имея большое желание работать для молодой советской Родины, в 1925 г. Т. Назарян занимает должность заместителя председателя комитета по помощи Карабаху.

У Тиграна Назаряна были большие, светлые идеи во имя своего возрожденного народа, но смерть помешала осуществлению его замыслов.